նուն գեղերը իրենց բաժանումներով։ Սիվրիչայ առուակը ունի իր աջակողմեան Շամխոյ[1], Ուրուս-Կափասի, Ալաբալիկ-

---

որեւէ խորհրդաւոր նշան բնապաշտական շրջանից։ Ամէն մի չիրմի վրայ կան պնակներ, թասեր, գաւեր քանդակուած, որոնք հին-հին դարերում իրապէս դնում էին գերեզմաններում, որպէս զի հանգուցեալները դրանցից օգտուէին հանդերձեալ կեանքում։ Այս բոլոր ծաղիկները հիւսւում էին երրորդական անբաժանելի եռանկիւնով, որը գործածուած է, որպէս անսահման բեղմնաւորման խորհրդանիշ։ Այս գերեզմանատունը մի անզուգական թանգարան է, ուր կուտակուած են գեղարուեստի ամենաընտիր եւ ամենագեղ որմնանկարների բնօրինակները, որտեղից օգտուել են Ջուղայեցները, Ռնեցիները, Վասպուրականցիները իրենց որմնանկարների համար, որոց ձեռքով տարածուել է հարաւ. Սարակինոսներին եւ Ֆաթիմիդների շրջանում — Եգիպտոս, Թունիս, մինչեւ Սպանիա, Ալհամբրայի եւ Կորդովայի կերտուածքներում։

Բայց խիստ ցաւալի է, որ այս գերեզմանոցները թողնուել են դարերով անխնամ եւ չարունակաբար, որպէս կռապաշտական յիշատակարան կործանուել են, փշրուել են, տարել են ախոռները սալայատակելու եւ որ ամենագլխաւորն է կրօնամոլները, քարերով եղծել, փշրել, ոչընչացրել են բազմաթիւ անգնահատելի արձանաքարերը։ Բայց այնքան ընդարձակ եւ ճոխ է, որ ինչքան էլ ջախջախեն եւ փշրեն, մնացորդները կը կարողանան վկայել եւ հաստատել, որ Օլթի ջրի ափերին ճարտար արհեստագէտների հանճարեղ միտքը եւ ունակ ձեռքերը հրաշալիքներ են ստեղծագործել ոչ միայն քրիստոնէութիւնից, այլ մոխրապաշտութիւնից էլ վաղագոյն շրջանում, պարթեւների աշխարհակալ ժամանակներից աւելի վաղ։

[1] Շամխոր գեղը Գանձակի նահանգի եւ գաւառի, Շամխալները Դաղստանի յայտնի հին գիւղերի-չէների անուններ են, որոնց մի նորը հանդիպում է Օլթի գետի առ-բից մէկի վրայ Շամխոյ անունով։ Թէ ինչ ծագում ունի պարզուած չէ. բայց այն ճանապարհի վրայ է գտնուում, որտեղից անցան եւ բարձունքների ու հովիտներին ապաստան եղան այն նախնական իշխանականները, որոնք պար-